# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2009 թվականի հունիսի 11-ի ՀՕ-158-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ

<<«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ>>

**Հոդված 2.** Օրենքի 1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Սույն օրենքով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում (այսուհետ՝ Աշխատակազմ) քաղաքացիական ծառայության առանձնահատկությունները:»

**Հոդված 3.** Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Աշխատակազմում ծառայությունը քաղաքացիական ծառայություն է, որի իրականացման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ սույն օրենքով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ:»:

**Հոդված 4.** Օրենքի 3-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 3. Պաշտոնների անձնագրերի հաստատման առանձնահատկությունները**

1. Քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնությունն ստանալուց հետո Ազգային ժողովի նախագահը հաստատում է Ազգային ժողովի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերը:»:

**Հոդված 5.** Օրենքի 4-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

**Հոդված 4. Համակարգող փորձագետի և մյուս փորձագետների (մասնագետների) պաշտոնների առանձնահատկությունները**

1. Համակարգող փորձագետի և մյուս փորձագետների պաշտոնների անձնագրերի նախագծերը կազմելիս կրթության և (կամ) աշխատանքային ստաժի և (կամ) աշխատանքի բնագավառի չափանիշները ներկայացնում է համապատասխան հանձնաժողովի նախագահը:
2. Համակարգող փորձագետի և մյուս փորձագետների կատարողականի գնահատումն իրականացվում է հանձնաժողովի նախագահի կողմից:
3. Վերակազմակերպված կամ անվանափոխված մշտական հանձնաժողովների համակարգող փորձագետը և մյուս փորձագետները (մասնագետները) օգտվում են աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքից, եթե բավարարում են նոր պաշտոնի անձնագրով սահմանված պահանջները:
4. Վերակազմակերպված կամ անվանափոխված մշտական հանձնաժողովում քաղաքացիական ծառայության պաշտոնի չնշանակվելու դեպքում վերջիններս գրանցվում են քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում:

**Հոդված 6.** Օրենքի 5-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

**Հոդված 5. Ծառայության առանձնահատկությունները բյուջետային գրասենյակում**

1. Բյուջետային գրասենյակի փորձագետները քաղաքացիական ծառայողներ են, որոնց աշխատանքային հարաբերություններին վերաբերող հարցերը, որոնք կարգավորված չեն «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով, սույն օրենքով, կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով և «Հանրային ծառայության մասին» օրենքով:

2.Բյուջետային գրասենյակի քաղաքացիական ծառայողները պաշտոնի նշանակվում են մրցույթի արդյունքներով՝ 5 տարի ժամկետով, որը կարող է երկարաձգվել պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ՝ 5 տարի ժամկետով:

**Հոդված 7.** Օրենքի 6-43-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 8. Եզրափակիչ և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:
2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո աշխատակազմի պետական ծառայողները համարվում են քաղաքացիական ծառայողներ և նշանակվում քաղաքացիական ծառայության պաշտոններում՝ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 44-րդ հոդվածով սահմանված կարգով:
3. Բյուջետային գրասենյակի աշխատողների քաղաքացիական ծառայողներ համարելու և պաշտոնի նշանակելու հարաբերությունները կարգավորվում են Ազգային ժողովի խորհրդի որոշմամբ: